ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-08/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-08/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-08/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Նարեկ» ԲԲԸ-ն հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Հրավերին կից պայմանագրի նախագծի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել են գնման ենթակա ապրանքները, որոնք բաղկացած են 32 չափաբաժիններից, սակայն գնման ժամանակացույցում նշվել է ծանոթություն, որով սահմանվել է, որ Մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի ամբողջ ծավալի համար, առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար և առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար:

«Նարեկ» ԲԲԸ-ն մասնակցել է նշված ընթացակարգի 10-ից 17-րդ և 22-ից 24-րդ չափաբաժիններին և գնային առաջարկ է ներկայացրել նշված չափաբաժիններով նախատեսված ամբողջ ծավալով գնման ենթակա ապրանքների համար:

Գնահատող հանձնաժողովը հայտարարեց նշված ընթացակարգի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որի ընթացքում պարզվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են առանձին չափաբաժինների առանձին ծավալների մասով գնային առաջարկներ, որի արդյունքում հանձնաժողովը մեկ չափաբաժնի շրջանակներում տարբեր գներով առաջին տեղը զբաղեցնող ճանաչեց ընթացակարգի մեկից ավելի մասնակիցների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն գնման առարկա է հանդիսանում գնվող ապրանքը:

«Նարեկ» ԲԲԸ-ն գտնում է, որ պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետի սահմանված պահանջը, քանի որ նշված ընթացակարգը բաղկացած է 32 չափաբաժիններից, իսկ գնման առարկան հանդիսանում է յուրաքանչյուր չափաբաժնում նշված քանակով և համապատասխան բնութագրով ապրանքը:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 111-րդ կետի 8-րդ մասով սահմանվել է, որ ընթացակարգի հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հաշվի առնելով վերոգրյալը «Նարեկ» ԲԲԸ-ն գտնում է, հրավերով նախատեսված այն սահմանումը, որ մասնակիցն իրավունք ունի հայտ ներկայացնելու գնման ենթակա ապրանքի անվանացանկի առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված 2-րդ մասով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 111-րդ կետի 8-րդ մասով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում խախտվել է

ընթացակարգի հաղթողին՝ ընտրված մասնակից որոշելու նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը:

Ելնելով վերոգրյալից «Նարեկ» ԲԲԸ-ն խնդրել է դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 23.01.2013թ. N 04/032-125 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.01.2013թ. «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությանը 05.02.2013թ. N ԴՎԱ/309 գրությամբ «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Նարեկ» ԲԲԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքում նշել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում պայմանագրի նախագիծը, որտեղ հստակ նշված է, որ կարող է ներկայացվել ինչպես ամբողջ ծավալի, այնպես էլ առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար և առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, դրանով իսկ հնարավորություն է տրվել շրջանակային համաձայնագրերով գրանցված մասնակիցներին իրենց արտադրական հնարավորություններով մասնակցելու և առաջարկելու առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, որի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի առաջարկած քանակը դիտվել է որպես առանձին չափաբաժին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները որոշվել են ըստ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների շրջանակներում՝ գնային առաջարկով ներկայացրած առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար՝ (խոսքը վերաբերվում է այն հայտերին, որոնք համապատասխանում են հրավերին և ՀՀ գնումների

օրենսդրությանը): «Նարեկ» ԲԲԸ-ն հնարավորություն ուներ ՀՀ գնումների օրենսդրության համապատասխան մինչև գնային առաջարկ ներկայացնելը բողոք ներկայացնել հրավերում առկա «անհամապատասխանության» վերաբերյալ կամ պարզաբանում պահանջելու: ՀՀ պաշտպանության նախարարությունը վերոգրյալից ենթադրում է, որ «Նարեկ» ԲԲԸ-ն ընթացակարգի արդյունքներից չբավարարված լինելով փորձում է հասնել նրան, որ իր ներկայացրած բողոքով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չեղյալ համարվի:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է ներկայացված բողոքը անհիմն է: «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որևէ մասնակցի շահ չի ոտնահարվել:

3. ԳԲԽ-08/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկում ենք «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից 21.01.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

4. ԳԲԽ-08/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-08/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2013թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 1 արձանագրությունը, Հրավերին կից պայմանագրի նախագծի N 2 հավելվածը՝ գնման ժամանակացույցը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 05.02.2013թ. N ԴՎԱ/309 գրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Նարեկ» ԲԲԸ-ն:

«Նարեկ» ԲԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ հրավերին (ծանուցմանը) կից պայմանագրի նախագծի 2-րդ հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել են գնման ենթակա ապրանքները, որոնք բաղկացած են 32 չափաբաժիններից, սակայն գնման ժամանակացույցում նշվել է ծանոթություն, որով սահմանվել է, որ Մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի ամբողջ ծավալի համար, առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար և առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար և արդյունքում Հանձնաժողովը մեկ չափաբաժնի շրջանակներում տարբեր գներով առաջին տեղը զբաղեցնող է ճանաչել ընթացակարգի մեկից ավելի մասնակիցների:

ՀՀ պաշտպանության նախարարությունը այս կապակցությամբ Կենտրոնին ներկայացված 05.02.2013թ. N ԴՎԱ/309 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում պայմանագրի նախագիծը, որտեղ նշված է եղել, որ հայտերը կարող է ներկայացվել ինչպես ամբողջ ծավալի, այնպես էլ առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար և առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, դրանով իսկ հնարավորություն է տրվել շրջանակային համաձայնագրերով գրանցված մասնակիցներին իրենց արտադրական հնարավորություններով մասնակցելու և

առաջարկելու առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, որի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի առաջարկած քանակը դիտվել է որպես առանձին չափաբաժին:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգին մասնակցելու 28.12.2012թ. N 1793 ծանուցմանը կից պայմանագրի նախագծի 2-րդ հավելվածով՝ գնման ժամանակացույցի ծանոթությամբ սահմանվել է, որ Մասնակիցն իրավունք ունի հայտը ներկայացնել գնման ենթակա ապրանքի անվանացանկի.

- ամբողջ ծավալի համար.
- առանձին չափաբաժինների ամբողջ ծավալի համար.
- առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա հրավերը պետք է պարունակի դրա պայմանները և կարգը:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգը բաղկացած է եղել 32 չափաբաժիններից և այն, որ առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար և դրանց գնահատման ու համեմատման կարգ ծանուցմամբ նախատեսված չեն, հետևաբար Պատվիրատուի այն հիմնավորումը, որ «առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար» հայտ ներկայացնելու սահմանումը հնարավորություն է ընձեռել շրջանակային համաձայնագրերով գրանցված մասնակիցներին իրենց արտադրական հնարավորություններով մասնակցելու և առաջարկելու առանձին չափաբաժինների առանձին ծավալների համար, որի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի առաջարկած քանակը դիտվել է որպես առանձին չափաբաժին, անհիմն է:

Բողոքաբեր կազմակերպությունը նշել է, որ վերջինս գնային առաջարկ է ներկայացրել վերը նշված ընթացակարգի Հրավերով սահմանված 10-ից 17-րդ և 22-ից 24-րդ չափաբաժինների ամբողջ ծավալի համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.01.2013թ. ժամը 11:00 N 1 արձանագրության 4.2 կետով որոշում է ընդունել հաստատել ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և բավարար գնահատված Մասնակիցների հայտերը գնահատել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի պահանջներին համապատասխան և նույն

արձանագրության N 1 հավելվածին համապատասխան հայտարարել Ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակիցներ:

Նշված արձանագրության՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների գնային առաջարկների N 1 հավելվածի ուսումնասիրությունից պարզվում է, որ Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են առանձին չափաբաժինների առանձին ծավալների մասով գնային առաջարկներ, որի արդյունքում հանձնաժողովը մեկ չափաբաժնի շրջանակներում տարբեր գներով առաջին տեղը զբաղեցնող է ճանաչել Ընթացակարգի մեկից ավելի մասնակիցների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տվյալ դեպքում չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրեսդրությամբ և Հրավերով սահմանված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն ենթադրությանը, որ «Նարեկ» ԲԲԸ-ն ընթացակարգի արդյունքներից չբավարարված լինելով փորձում է հասնել նրան, որ ներկայացրած բողոքով Ընթացակարգը չեղյալ համարվի, քանի որ «Նարեկ» ԲԲԸ-ն հնարավորություն ուներ մինչև գնային առաջարկ ներկայացնելը գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան հրավերում առկա «անհամապատասխանության» վերաբերյալ բողոք ներկայացնելու կամ պարզաբանում պահանջելու, գտնում ենք, որ դա բողոքաբեր ընկերության իրավունքն է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետեը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Նարեկ» ԲԲԸ-ի կողմից 21.01.2013թ. ներկայացված բողոքը բավարարել:
2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամ՝ Նարինե Նիկոլայան